

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՈՒՂՂՈՐԴԵՑ ԻՆՁ ԱՌ ԻՍԼԱՄ

[ Հայերեն - Armenian – أرمني ]



Աբդուլ Մալիք Մ.Ջ Լեֆլանք



Թարգմանությունը:

**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)**

& Աննա Ռ. Հակոբ  
Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

# الإنجيل قادمي إلى الإسلام



عبد الملك لبلايك



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

## ՀՐԱՏԱՐԱԿԶԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ



Ալլահի անունով, Բարերար, Ողորմած:

Քրիստոնեության հիմնական ուսմունքը և Հիսուս Քրիստոսի (Խ.Ա.Ո.Ն) անհատականության վիճաբանությունը, որը ժխտում է Իսլամը, հանդիսանում է իսլամի և Քրիստոնեության հիմնական տարբերությունը: Երրորդությունը, Քրիստոսի Աստվածային Որդի լինելը, Բնածին մեղքը և տանջանքը, որոնք այս ուսմունքների արդյունքն են, Հիսուս Քրիստոսի վեր լինելու ցնդաբանությունը, որից վեր էր Ալլահը դասում նրան:

Բր. Մ. Ջ. Լեբլանքի «Աստվածաշունչը ուղղորդեց ինձ առ Իսլամ» աշխատությունը թուլացնում է այս ուսմունքների իրական պատկերը այն անհատի համար, ով փնտրում է իրական ճշմարտությունը: Ընթերցելով այս հավաքագրված հետազոտական գիրքը, մենք կարող ենք համոզված լինել նախապես արված ավելի գիտական և աստվածաշնչյան ուսումնասիրությունների: Հնարավոր է, որ ավելի շատ գիտնականներ և մտածողներ, ովքեր մինչ այժմ գտնվում են Քրիստոնեության մեջ, համամիտ լինեն Իսլամի հետ: Այս գիրքը պետք է ապացույց հանդիսանա ավելի արժեքավոր արժանիքի և Մահմեդականների և Քրիստոնյաների համար և որ այն հանդես կգա որպես արդյունավետ գործիք մահմեդական քարոզիչների ջանքերում, որպեսզի հրավիրի Քրիստոնյաներին առ Իսլամ, Աստված կամենում է հակառակը, Քրիստոնյաները պետք է ավելի ուշադիր

լինեն, թե փաստացի ինչ է ասում Աստվածաշունչը և ինչ է ուսուցանում Հիսուսը, Մարիամի որդին (Խ.Ա.Ռ.Ն), որպես այս գրքի ուսումնասիրության արդյունք:

Մենք, Ալ Աթթիկ Հրատարակչատունը, Կանադա, որի նշանաբանն է լուսավորել մարդկության տեսադաշտը Ալլահի և ճշմարիտ Հավատքը լույսով, հույս ունենք, որ ոչ մահմեդականները, կրնդունեն ճշմարտությունը և կվկայեն Ալլահի եզակիությունը և Մուհամմեդի (Խ.Ա.Ռ.Ն) ծառա և Մարգարե լինելու գաղափարը:

Ձեր եղբայրը Իսլամի մեջ

Մ.Ռ. Աթթիկ Հրատարակիչներ

Ալ Աթթիկ Հրատարակչատուն, Կանադա

Հունվար 2000 թվական

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՆՈՉՉԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ**

4 րդ հարկ, 124 Քուին փողոց, Դուրբան 4901

Հեռ. 027 31 3060026 Տելեքս 095 6 21816 IPCI SA Ֆաքս 027 31 3040326

05 հունվար 1999 թվական

16 Ռամադան 1419 թվական ըստ Հիջրայի

Եղբայր Աբդուլ Մալիք ԼեՔլանք

Հաղիդ I.S.D

P.O Box 10053

Ալ Ջուբայլ Արդյունաբերական Քաղաք 31961

Սաուդյան Արաբիայի Թագավորություն

Պատվելի եղբայր Աբդուլ Մալիք

Աս Սալամ Ալեյքում ՌԻ-առահմաթուլլահ  
ՌԻ-աբարաթեթուհ

Ամբողջ փառքը Ամենաբարձրյալ Ալլահին և անհամար աղոթքները և ողջույները մեր սուրբ Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն):

Որքան ողջունելի է, որ մենք մեկ անգամ ևս ի վիճակի ենք ողջունել Մուրբ Ռամադան ամիսը, որը իր հետ բերում է ամբողջ շնորհը և հոգևոր առատությունը: Թող դուք վայելեք դրա զմայլքը և թող Ամենաբարձրյալ Ալլահը

շնորհի ձեր ընտանիքին առողջություն, երջանկություն, բարգավաճություն և Տիեզերքի խաղաղություն:

Իմ սիրելի հայրը, Շեյխ Ահմեդ Դիդաթը, նույնպես փոխանցել է իր լավագույն ցանկությունները և ջերմ ողջույնները ձեզ:

Ես երախտապարտ եմ ձեր «Աստվածաշունչը ուղղորդեց ինձ առ իսլամ» աշխատությանը: Ես ընթերցեցի այն Շեյխ Ահմեդ Դիդաթին, ով ուրախությամբ ոգևորվեց գրքի որակով և բովանդակությամբ: Շեյխ Դիդաթը ասաց. «նշանավոր աշխատանք»:

Շարունակիր մեծ աշխատանքը: Թող Ալլահը օգնի քեզ քո ջանքերում: Ամեն:

Հանդիպման սկզբում, մեր սիրելի հայրը ավելին էր քան ուրախությունը, քանի որ երկու տարի առաջ նա կաթվածք էր ստացել: Նա մեզ զարմացրեց իր տանը անկողնում գամված վիճակում քրիստոնյա միսիոներների հետ քննարկմամբ: Միսիոներները եկել էին նրա տուն, որպեսզի աղոթեին նրա առողջության համար, սակայն նրանք սկսեցին քարոզել և ասել.

«Դրախտի դարպասի վրա փորագրված է մի անուն: Այդ անունը Մարգարե Մուհամմեդի, Մարգարե Սողոմոնի, Մարգարե Մովսեսին անունները չեն, այլ երևում է Հիսուսը անունը, իսկ բանալին հանդիսանում է Հիսուսի արյունը»:

Հարգարժան եղբայր, դուք չեք հավատա, թե ինչ պատահեց երբ նրան ասեցին այդ: Իմ հայրը տեղեկատվության միջոցով սկսեց նրանց հարցնել իրենց հայտարարությունների վավերականության մասին: Սա տևեց մեկ ժամ և նրանք հեռացան, երբ զիտակցեցին, որ նա

նրանց գցում է շփոթության մեջ և բացահայտում է իրենց սխալները, իրենց իսկ գրքի մեջ: Ես կցում եմ մի լրագրողի հոդվածը, ով տառապում է միևնույն հիվանդությամբ ինչպես իմ հայրը: Միակ տարբերությունը հանդիսանում էր այն, որ իմ հայրը գիտակից էր և հնարավորություն ուներ հիշել այդ օրը: Ջազակուլլահ Խեյրան:

Մենք երախտապարտ ենք Ամենաբարձյալ Ալլահին, որ նա պահպանել է նրա լսելու, տեսնելու և ընկալելու ունակությունը:

Մենք ձեզ մաղթում ենք ամենայն բարիք և խնդրում ենք կապ պահպանել մեզ հետ:

Խնդրում ենք աղոթեք մեր Շեյխ Դիդաթի համար և խնդրեք ձեր ընտանիքի անդամներին և ընկերներին աղոթել մեզ հետ:

Սալամ:

Ձեր եղբայր Յուսեֆ Ահմեդ Դիդաթ:

Ես այս աշխատանքը նվիրում եմ իմ մորը, հորը, եղբայրներին, քույրերին, դստերը, Ադրինեին, նախկին կնոջը և նրա մորը, ովքեր հուսանք մեկ օր կդառնան մահմեդականներ: Նույնպես, ես ցանկություն ունեմ կիսել այս գրքի հաջողությունը Ահմեդ Դիդաթի հետ, ում 1996 թվականին հրեշտակային վիճակում ես հանդիպել եմ Արքա Ֆեյսալի Հատուկ հիվանդանոցի և Հետազոտությունների Կենտրոնում, Ռիյադ Սաուդյան Արաբիա:

Մ. Ջ. ԼեԲլանք





## ՆԱԽԱԲԱՆ

Այս աշխատանքը բոլոր այն քրիստոնյաների համար է, ովքեր գիտակցել են իրենց ներքին պատասխանատվությունը և ձգտում են Մեկ Ճշմարիտ Աստծո երկրպագության ուղղորդությանը: Երկրպագություն, որը հիմնված չէ հասարակական, աշխարհիկ կամ ընտանեկան նորմերի, այլ իր ծննդյան իրավունքի և պարտավորության վրա երկրպագել իրենց Արարչին:

Այս գիրքը հանդիսանում է տարբեր գրքերի հատվածների ժողովածու, ուղղված Քրիստոնեությանը, որը ես նախկինում ընթերցել եմ և որից հետո ես դրաձեղ եմ մահմեդական: Մահմեդական դառնալուց հետո, ես շարունակում էի ընթերցել Քրիստոնեության մասին գրքեր, որովհետև 28 տարի անց դժվար է գցել Քրիստոնեության «մաշկը», տարիներ, որոնք ինձ համարյա ուղղորդեցին դառնալ Աֆրիկյան Մեթոդիստական Եպիսկոպոսական եկեղեցու կառավարիչ Գրեյթ Ֆոլսոմ, Մոնթանայում:

Ես փորձել եմ ճշտորեն ընտրել և կազմակերպել այս խելամիտ գրքերի պատշաճ տեղեկատվությունը, այնպես որ ի վիճակի լինեմ տրամադրել կապակցված և համախմբված տեղեկություն, որը ես ցանկանում էի որ որևէ մեկը ինձ տար իմ քրիստոնյա լինելու ընթացքում: Այնուամենայնիվ, Իսլամ ընդունելու և վերադառնալու իմ ծրագիրը, եկավ որպես Ալլահի սահմանում:

Ես ցանկություն ունեմ նշել, որ երբ խոսքը գնում է «Աստծո» մասին, ես նկատի ունեմ Մեկ Գերագույն Էակի, ով չունի գործընկեր և չի հանդիսանում երրորդության մաս: Պետք է

նշել, որ ըստ 1966 թվականի Բրիտանիկա Հանրագիտարանի, արաբերեն «Ալլահ» բառը Մահմեդականների պես կիրառում են նաև Քրիստոնյաները: Տես Ալլահ բառը:

Ես ձեզ խրախուսում եմ մի կողմ դնել ձեր կանխակալ պատկերացումները Քրիստոնեության և Իսլամի մասին և բաց մտքով ընդունել այն, ինչ ներկայացվում է: Հույս ունեմ Ալլահի Կամոք, որ այս ձգտումը ձեր առջև կբացի հետաքրքրության կայծը, որը հնարավորություն կտա շարունակել ընթերցել Աստվածաշնչից դուրս և երկու կրոնների ընկալումից հետո կատարել կրթված որոշում: Որոշումը, որը հիմնված է ձեր ընտրության, այլ ոչ թե ձեր ծնողների կամ տեղեկատվության վրա: Բոլոր փաստարկներից հետո, այնուհետ դուք կարող եք դնել ձեզ միակ նպատակը, ինչի համար էլ մեզ արարել են, այսինքն երկրպագել Ալլահին, Աստծուն:

## ԱՆՂԱՂԱՐ ԱՂՈԹՔ

Իմ քրիստոնյա լինելու ընթացքում, Աստվածաշնչի մեջ առկա էին շատ տարբերակներ, որոնք ինձ ստիպել էին հարցեր ուղղել կրոնին, որին ես հետևում էի: Գոյություն ունեւ մեկ որոշակի տարբերակ Թեսաղոնիկիցիներ Ա 5:17 որը ասում է. «անդադար աղոթեք» և որը մեծապես ձգձգվում էր իմ մտքում: Ես հաճախ զարմանում եմ, թե ինչպես է կարող անհատը, քրիստոնյան, աղոթել, անդադար լինի երկրպագության վիճակում: Առանց որևէ աստվածաշնչյան կամ աստվածային ուղղորդության, միակ ուղղին, որը ըստ իս հնարավոր է, այն է, որ գործել բարի արարքներ և պահպանել Աստծո հիշատակությունը լեզվով և սրտով: Ամեն դեպքում, ես ինչ որ չափով անհնար գտա դա: Սակայն, երբ 1987 թվականին ես ծանոթացա Իսլամին և սկսեցի ավելի ընթերցել և ուսուցանել կյանքի այս ձևը, ես գտա, որ իսլամը ապահովել է աստվածային ուղղորդությունը և Աստծուց, Ալլահից և Մարգարե Մուհամմեդից (Խ.Ա.Ո.Ն) ըստ որի անհատը կարող է անդադար աղոթել, եթե դա հանդիսանում է Աստծո կամքը:

Լինի դա արթնանալը, սնվելը, քնելը, հագնվելը, կնոջ հետ լինելը, նրան նայելը, խանութ գնալ, լոգասենյակ գնալը, հայելու մեջ դիտելը, ճանապարհորդելը, հիվանդի այցելությունը, ոչ կրոնական հավաքի այցելությունը, լոգանք ընդունելը, սեռական հարաբերությունը, հորանջելը, եղունգներ հարդարելը, փոշտալը, մարդկանց ողջունելը, զրուցելը, տանը հյուրեր ընդունելը, զբոսնելը, վարժանք կատարելը, վիճելը, տուն մտնելը, աղոթելը և այլ գործողությունները, Իսլամը և Ղուրանի ուղղորդությունը և Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) արարքները և խոսքերը

տրամադրում են եղանակներ, որոնց մեջ ես կարող էի դիտարկել Թեսաղոնիկիցիներ Ա 5:17 տարբերակը: Ի լրացում, այն ինձ հնարավորություն տվեց ներդաշնակ լինել ինձ հետ և ենթարկվել Մեկ Ճշմարիտ Աստծոն, Ալլահին:

Իսլամի այս աստվածային ուղղորդությունը խորապես ուսուցանեց ինձ իմ պարտականությունները, պատասխանատվությունները և Արարչի հանդեպ ծննդյան իրավունքը և Քրիստոնեությունը: Հետևաբար, որպես մահմեդական, ավելի ընթերցելով և ուսումնասիրելով քրիստոնեությունը, Աստծո կամոք ես անհրաժեշտություն զգացի ձեզ հետ կիսել այն, թե ինչպես Աստվածաշունչը ուղղորդեց ինձ առ Իսլամ:

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն փաստը, որ Թորայի, Հին Կտակարանի պատմության մեջ երբեք գոյություն չունեն Աստծո կրոնը, որպեսզի կոչվի Մարգարեի անունով, «այսինքն Ադամություն, Աբրահամություն, Մովսեսություն և այլն», ես հույս ունեմ բացատրել, որ Հիսուսը չի քարոզում Քրիստոնեություն, այլ կրոն, ըստ որի ամբողջ փառքը և երկրպագությունը պատկանում է մեկ Աստծուն:

Երկրորդ անգամ հայացք գցելով քրիստոնեությանը, ես ինձ հարց ուղղեցի, թե որտեղից էր ծագել Քրիստոնեություն բառը և արդյո՞ք Հիսուսը նշել էր դա: Այո, Աստվածաշնչի մեջ ես չգտա քրիստոնեություն բառը, ոչ էլ նույնիսկ Աստվածաշնչի բառարանի մեջ: Մասնավորապես, Աստվածաշնչի մեջ ես չգտա ոչինչ, որտեղ Հիսուսը իրեն կոչեց Քրիստոնյա:

Քրիստոնյա բառը առաջին անգամ նշել են հեթանոսները, որպեսզի նկարագրեն նրանց, ովքեր հետևում են Հիսուսին: Նոր Կտակարանի մեջ, Անտիոքում, մոտավորապես 43 թվականին, հեթանոսը և հրեան մեկից երեք անգամ նշել են այն «Գործք 11:26, Գործք 26:28 և Պետրոս Ա 4:16» տարբերակների մեջ, շատ ավելի ուշ, երբ Հիսուսը լքեց երկիրը: Հեթանոսների խոսքերը արժեքավոր ընդունելու կամ աստվածայնությանը զուգակցելու համար, Հիսուսը կամ Աստվածը հակառակն է բոլոր մարգարեների ուսմունքներին:

Հիսուսը մարգարեացրեց, որ մարդիկ զուր պետք է երկրպագեն նրան և հավատք ընծայեն ուսմունքներին, որոնք կերտել են մարդիկ: (Մատթեոս 15:9)

«Սակայն, զուր են նրանք ինձ երկրպագում, ուսուցանելով ուսմունքներ, որոնք մարդու պատվիրաններն են»:

Մատթեոս 15:9 ի այս տարբերակը ավելի ուշ աջակցել է Ղուրան 5:116, 117 տարբերակների խոսքերը.

«Եվ զգուշացեք, Ալլահը կասի. Օվ Հիսուս, Մարիամի որդի, արդյո՞ք դու չես ասել մարդկանց, Վերցրեք ինձ և իմ մորը որպես երկու աստված Ալլահի փոխարեն: Նա, Հիսուսը կասի, Փառք լինի Քեզ. երբեք ես չեմ կարող ասել այն, ինչի իրավունքը չունեմ: Եթե ես ասեի այդպիսի բան, Դուք անշուշտ տեղյակ կլինեիք: Դուք տեղյակ եք թե ինչ է իմ սրտում, չնայած ես տեղյակ չեմ, թե ինչ է Քո սրտի մեջ: Քանի որ Դուք լիովին տեղյակ եք ամենին, ինչ թաքնված է: Երբեք ես չեմ ուսուցանել, բացառությամբ այն, ինչ Դուք եք պատվիրել ինձ ասել իմաստությամբ, երկրպագեք Ալլահին, իմ Տիրոջը և ձեր Տիրոջը. Եվ ես նրանց վկան էի, երբ բնակվում էի նրանց մեջ, երբ Դուք ինձ չէիք տարել Ձեր մոտ, ես նրանց դիտորդն էի և Դուք վկա եք ամենին»:

وَإِذْ قَالَ اللَّهُ يَا عِيسَى ابْنَ مَرْيَمَ أَأَنْتَ قُلْتَ لِلنَّاسِ اتَّخِذُونِي وَأُمَّيَ  
الْهَيْئِ مِنْ دُونِ اللَّهِ <sup>ط</sup> قَالَ سُبْحَانَكَ مَا يَكُونُ لِي أَنْ أَقُولَ مَا لَيْسَ لِي  
بِحَقٍّ <sup>ع</sup> إِنْ كُنْتُ قُلْتُهُ فَقَدْ عَلِمْتَهُ <sup>ط</sup> تَعْلَمُ مَا فِي نَفْسِي وَلَا أَعْلَمُ مَا فِي  
نَفْسِكَ <sup>ع</sup> إِنَّكَ أَنْتَ عَلَّامُ الْغُيُوبِ ﴿١١٦﴾ مَا قُلْتُ لَهُمْ إِلَّا مَا أَمَرْتَنِي بِهِ  
أَنْ اعْبُدُوا اللَّهَ رَبِّي وَرَبَّكُمْ <sup>ع</sup> وَكُنْتُ عَلَيْهِمْ شَهِيدًا مِمَّا دُمْتُ فِيهِمْ <sup>ط</sup>  
فَلَمَّا تَوَفَّيْتَنِي كُنْتُ أَنْتَ الرَّقِيبَ عَلَيْهِمْ <sup>ع</sup> وَأَنْتَ عَلَى كُلِّ شَيْءٍ شَهِيدٌ

(المائدة: 116-117)

Ես հասկացա, որ Աստվածաշնչյան տարբերակները, ինչպիսիք են Հովհաննես 5:30, Հովհաննես 12:49, Հովհաննես 14:28, Եսային 42:8 և Գործք 2:22, աջակցում են Ղուրանի վերոհիշյալ տարբերակներին:

Նախքան թողնելով Քրիստոնեության թեման, որը մենք կքննարկենք այս գրքի մեջ, ես պետք է նշեմ մեկ փոքր, սակայն էական մի կետ:

Եթե քրիստոնյաները «նման են Քրիստոսին», ապա ինչու՞ նրանք միմյանց չեն ողջունում «Խաղաղություն լինի ձեզ», Սալամ Ալեյքում խոսքերով, ինչպես արել էր Հիսուսը Ղուկաս 24:36 տարբերակի մեջ: Ինչպես դուք տեղյակ եք, մահմեդականի ողջույնը մյուս մահմեդականին հանդիսանում է Ասսալամու Ալեյքում խոսքերը, որը նման է Քրիստոսի խոսքերին:

## ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԲԱԶՄԱԹԻՎ ԳՆՔԵՐ

Հարկ է նշել, որ Աստվածաշնչյան քաղվածքները, որոնք մեջ ենք բերել այս գրքի մեջ, ճշգրտորեն չեն կարող համապատասխանել ձեր կիրառության տակ գտնվող Աստվածաշնչին: Վաճառքի մեջ գոյություն ունեն շատ Աստվածաշնչեր, որոնք կիրառում են Քրիստոնեական տարբեր աղանդները և նրանք բոլորը ասում են, որ անկախ այդ գրքերի տարբերությունների, նրանք հանդիսանում է Աստծո խոսքը: Դրանց թվին են պատկանում 1952 և 1971 թվականների Վերանայված Տիպական Տարբերակը, Նոր Ամերիկյան Տիպական Աստվածաշունչը, Սուրբ Աստվածաշունչը, նոր Միջազգային Տարբերակը, Կենդանի Աստվածաշունչը, Սուրբ Գրերի Նոր Աշխարհի Թարգմանությունը, որը կիրառում են Եհովայի Վկաները, Հռոմեական Կաթոլիկ Տարբերակը և Արքա Ջեյմսի Տարբերակը: Հատուկ նշում.Այս Աստվածաշնչերի տարբերակների մեջ ես չեմ գտել մի հատված, որտեղ «Նոր Կտակարանը» իրեն այդպես է կոչել և ոչ մի տեղ «Հին Կտակարանը» իրեն չի կոչել «Հին Կտակարան»: Նույնպես «Աստվածաշունչ» բառը հայտնի չէ Աստվածաշնչի էջերի մեջ:

Ի լրացում շատ տարբեր քրիստոնեական աղանդների և Աստվածաշնչերի, ես գիտակցեցի, որ նույնպես գոյություն ունեն տարբեր մարդիկ, ոչ թե մարգարեներ, ովքեր հիմնել են այս աղանդները և կիրառել են Աստվածաշնչի տարբեր մեկնաբանություններ կամ մարդու կերտած ուսմունքները, ինչպես իրենց դավանանքը:



93 Էջի աղյուսակը «Ամերիկայի Միացյալ Նահանգների Ադանդների Մեծամասնության ծագումը» անվանմբ, պատկերում է Քրիստոնեությունը, որը մեծ ազդեցություն ունի մարդ հիմնադիրներից և իրենց մարդակերտ ուսմունքներից:

Ես ցանկություն ունեմ ձեզ հետ կիսել որոշ մտքեր, որոնք դուք չեք ընթերցել կամ որոնց դուք տեղյակ չեք, որոնք էլ կապված են Աստվածաշնչի Աստծո Խոսք լինելու հետ: Հակիրճ, թույլ տվեք նշել, որ 1957 թվականի սեպտեմբերին 8-ին Եհովայի Վկաները իրենց «Արթնացիր» ամսագրի մեջ նշել են այս զարմանալի վերնագիրը. «50,000 Միսլ Աստվածաշնչի մեջ»: Եթե դուք Եհովայի Վկաներին հարցնեք այս վերնագրի մասին, նրանք ձեզ կպատասխանեն, որ այսօր այդ սխալների մեծամասնությունը վերացվել են: Քանի՞ սն են վերացվել 5,000, 500 թե 50: Նույնիսկ, եթե մնա 50 սխալ, արդյո՞ք որևէ մեկը այդ սխալները կարող է վերագրել Աստծուն:

Երեմիա 8:8 տարբերակը նույնպես ասում է, որ Օրենքը, Թորան արդեն կեղծել են և այն չի հանդիսանում Աստծո լիարժեք Խոսքը:

«Ինչպե՞ս եք դուք ասում, Մենք իմաստուն ենք և Տիրոջ օրենքը մեզ հետ է: Ոչ, անշուշտ զուր է նա արել դա, դպիրների գրիչը զուր է»:

Թույլ տվեք առաջ բերել մեկ այլ հարց. Եթե "սուրբ" գիրքը պարունակում է հակազդող տարբերակներ, ապա ինչպե՞ս եք դուք այն շարունակում սուրբ համարել: Շատ հավանական է, որ դուք ասեք ոչ: Թույլ տվեք ձեզ հետ կիսել Հին և Նոր Կտակարանի մեջ առկա մի քանի հակազդող տարբերակներ.

Թագավորաց Բ 8:4	Մնացորդաց Ա 18:4
Թագավորաց Բ 8: 9, 10	Մնացորդաց Ա 18:9, 10
Թագավորաց Դ 8:26	Մնացորդաց Բ 22:2
Թագավորաց Բ 6:23	Թագավորաց Բ 21: 8
Ծննդոց 6: 3	Ծննդոց 9:29
Հովհաննես 5:37	Հովհաննես 14: 9
Հովհաննես 5:31	Հովհաննես 8:14

Մենք նշել ենք Նոր Կտակարանի միայն երկու հակազդությունը, սակայն կուղեկցեն մյուս հակազդությունները, երբ մենք վերանայենք Երրորդության, Հիսուս Քրիստոսի Աստվածայնության, Հիսուսի Աստվածային որդի լինելու, Բնածին Մեղքի և Քավության գաղափարները:

Ինչպե՞ս էր կարող Աստծո «ոգեշնչած խոսքը» տալ Հիսուսի սխալ ծագումնաբանությունը, Տես Մատթեոս 1:6 -16 տարբերակները, որտեղ նա հայտնում է 26 նախահայրերի մասին, մինչ մարգարե Դավիթը և Ղուկաս 3:23 -31 տարբերակները հաշվում է 41 նախահայր: Կամ այդ հարցի շուրջ տալ Հիսուսի ծագումնաբանությունը, ով հայր չուներ: Տես Թագավորաց Դ 19:1 37 տարբերակները, Այժմ ընթերցեք Եսայի 37:1 38 տարբերակը: Ինչու՞ են այս տարբերակների խոսքերը նույնական: Սակայն նրանք վերաբերվում են երկու տարբեր հեղինակներին, որոնցից մեկը անհայտ է, իսկ մյուսը հանդիսանում է Եսային, ովքեր

դարեր հեռու էին միմյանցից և Քրիստոնյաները այս գրքերը համարում են Աստծո ոգեշնչություն: Այսպիսով, արդյո՞ք Ամենաբարձրյալ Աստվածը մոռացության տվեց, որ Նա մինչ այդ թելադրել է հատվածները, ուստի Նա ստիպված էր կրկին բառ առ բառ թելադրել:

Աստվածաշնչի այլ հակասությունները կարելի է գտնել «Աստվածաշնչի 101 Պարզ Հակասություններ» աշխատության մեջ, որի հեղինակն է Շաբիր Ալլին: Նմուշները կարելի է գտնել այստեղ.

#50 Արդյո՞ք Հիսուսը իր մահկանացուն կնքել է մինչ տաճարի վարագույրի պատռվելը.

Ա. Այո, (Մատթեոս 27:50 51; Մարկոս 15:37 38)

Բ. Ոչ. Վարագույրի պատռվելուց հետո, այնուհետ Հիսուսը բարձրաձայն բղավեց (Ղուկաս 23 :45- 46)

# 54 Արդյո՞ք Հիսուսը խաչելությունից անմիջապես հետո Դրախտ ելավ.

Ա. Այո. Նա ասաց գողին, ով պաշտպանեց նրան «Այսօր դու ինձ հետ կլինես Դրախտում»: (Ղուկաս 23:43)

Բ. Ոչ. Երկու օր անց նա ասաց Մարիամ Մագդաղենացուն. "Ես դեռ չեմ ելել Հոր մոտ:" (Հովհաննես 20:17)

# 61 Ինչպե՞ս է Հուդան կնքել իր մահկանացուն.

Ա. Գումարը տաճար նետելուց հետո, նա հեռացավ և իրեն կախեց (Մատթեոս 27 :5)

Բ.Չար արարքի գումարով հող գնելուց հետո, նա արագ ընկավ և պայթեց մեջտեղում և նրա ամբողջ աղիքները դուրս թափվեցին (Գործք 1:18)

#75 Ըստ Ավետարանների, որո՞նք էին Հիսուսի վերջին խոսքերը մահվանից առաջ:

Ա. «Հայր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին»: (Ղուկաս 23:46)

Բ. «Ավարտվեց» (Հովհաննես 19:30)

Ուսումնասիրելով «Ձատիկ» բառը Նելսոնի Աստվածաշնչի բառարանի մեջ ես հասկացա, որ այդ բառը, ինչպես նշել է Գործք 12:4 տարբերակը հանդիսանում է «պասչա» հունարեն բառի սխալ թարգմանությունը, որն էլ հանդիսանում է «Ձատիկ» բառը:

Ինչպես դու տեղյակ եք, Ձատիկը Հրեական տոն է, ոչ թե Քրիստոնեական, որին ինչպես նշում է Մատթեոս 26:17-20 տարբերակները, իր մասնակցությունն է ցուցաբերել Հիսուսը: Այսպիսով, ինչու՞ Քրիստոնյաները Հիսուսի պես չեն նշում Ձատիկը, կամ այդ դեպքում, ինչու՞ «Քրիստոնյաները» չեն հանդիսանում Հրեաներ: Ես կարծում եմ, որ բոլոր մարդկային ձեռքերը, կործանել են Աստվածաշունչը:

Ելնելով վերոհիշյալ հակիրճ կետերից և այն փաստից, որ Աստվածաշնչի գիտնականները ճանաչել են մարդկային բնույթը և աստվածաշնչի մարդկային շարադրանքը (Քուրթ Քուկ, «Հին Կտակարան» Ծագումը և Շարադրանքը էջ.47,51,52) Քրիստոնեական մտքի մեջ պետք է առկա լինի այն փաստի ընդունումը, որ միգուցե Աստվածաշնչի յուրաքանչյուր խոսքը չի հանդիսանում Աստծո Խոսք:

Թեմայի հետ կապված, թույլ տվեք նշել, որ որոշ քրիստոնյաներ հավատք են ընծայում նրան, որ քրիստոնյա վանականը Աստվածաշունչը թելադրել էր Մարգարե Մուհամմեդին և այդ իսկ պատճառով Ղուրանի մեջ առկա են աստվածաշնչյան որոշ հաշիվներ: Որոշակի ուսումնասիրություններից հետո, ես դա անհնար գտա, քանի որ Քրիստոնեության 6-րդ դարում, երբ ապրել և քարոզել էր Մուհամմեդը, գոյություն չունեին արաբերեն Աստվածաշունչ: Ուստի, ոչ մի արաբ, նույնիսկ Մարգարե Մուհամմեդը, ով կատարյալ անուսում էր, հնարավորություն չունեին քննելու Աստվածաշնչի գրավոր տարբերակը իր իսկ լեզվով: Ղուրան 5:15-16 տարբերակը ասում է.

«Ով Գրի մարդիկ (Հրեաներ և Քրիստոնյաներ), այժմ եկել է ձեզ մոտ Մեր Մարգարեն (Մուհամմեդը), ով բացատրել է ձեզ այն ամենի մեծամասնությունը, որը դուք սովորություն ունեք թաքցնել Գրից և անցնել (այսինքն թողնել առանց բացատրության): Իրոք, ձեզ է եկել Ալլահի լույսը (Մուհամմեդը) և պարզ Գիրքը (այս Ղուրանը), որի միջոցով Ալլահը ուղղորդում է բոլոր նրանց, ովքեր փնտրում են խաղաղության ուղիու Նրա Բարի Շնորհը և Նա, Իր կամքով, դուրս է բերում նրանց խավարից առ լույս և նրանց ուղղորդում է ճշմարիտ Ուղիու»:

يَا أَهْلَ الْكِتَابِ قَدْ جَاءَكُمْ رَسُولُنَا يُبَيِّنُ لَكُمْ كَثِيرًا مِمَّا كُنْتُمْ تُخْفُونَ  
 مِنَ الْكِتَابِ وَيَعْفُو عَنْ كَثِيرٍ قَدْ جَاءَكُمْ مِنَ اللَّهِ نُورٌ وَكِتَابٌ مُبِينٌ  
 ﴿١٥﴾ يَهْدِي بِهِ اللَّهُ مَنِ اتَّبَعَ رِضْوَانَهُ سُبُلَ السَّلَامِ وَيُخْرِجُهُم مِّنَ  
 الظُّلُمَاتِ إِلَى النُّورِ بِإِذْنِهِ وَيَهْدِيهِمْ إِلَى صِرَاطٍ مُسْتَقِيمٍ

(المائدة: 15-16)

## ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ

Եթե դուք ընթերցեք Ղուկաս 1:2-3 տարբերակը, Ինչպես ես, դուք կուսուցանեք, որ Ղուկասը, ով չէր հանդիսանում 12 աշակերտներից և երբեք չէր հանդիպել Հիսուսին, ասաց, որ նա ինքը ականատես չէր եղել Հիսուսի ներկայությանը երկրի վրա և որ նրա գիտելիքները նա հավաքագրել է ականատեսներից և ոչ թե Աստծո ոգեշնչած խոսքերից: Ի դեպ, ինչու՞ է յուրաքանչյուր «Ավետարանը» սկսվում «ԸՄՏ» ներածությամբ: Ինչու՞ «ըստ»: Պատճառը կայանում է նրանում, որ ավետարաններից ոչ մեկը չի կրում իրական հեղինակի բնագիրը: Նույնիսկ, Մատթեոս 9:9 տարբերակի ներքին ապացույցները ապացուցում են, որ Մատթեոսը չի հանդիսանում իր անունը կրող առաջին Ավետարանի հեղինակը:

«Եվ, երբ Հիսուսը առաջ անցավ, այնտեղ Նա (Հիսուսը) մի մարդ տեսավ, ում անունը Մատթեոս էր, ով նստած էր հարկատանը և Նա (Հիսուսը) ասաց Նրան (Մատթեոսին), հետևիր Ինձ (Հիսուսին): Եվ Նա (Մատթեոսը) ոտքի կանգնեց և հետևեց Նրան (Հիսուսին):»

Առանց երևակայության որևէ նշույլի, կարելի է տեսնել, որ 'Նա' և 'Նրան' վերոհիշյալ հղումները չեն վերաբերվում Հիսուսին կամ Մատթեոսին, որպես հեղինակներ, այլ երրորդ անձին, ով գրառել է այն ինչ լսել կամ տեսել է - ասեկոսներ և ոչ թե Աստծո ոգեշնչած խոսքեր:

Հարկ է նշել և հայտնի է ամբողջ կրոնական աշխարհին, որ Նոր Կտակարանի ներկայիս չորս Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի «ավետարանները» հարկադրել է Նիկիայի Խորհուրդը ելնելով քաղաքական նպատակներից,

հեթանոս կայսր Կոնստանտինի հովանու ներքո և ոչ թե Հիսուսի:

Կոնստանտինի միտքը չի լուսավորվել, այն ոչ ուսումնասիրել, ոչ էլ ոգեշնչվել է: Նա հեթանոս էր, բռնապետ և ոճրագործ, ով սպանողի էր ենթարկել իր որդուն, կնոջը և հազարավոր անմեղ անհատների, ելնելով իր քաղաքական իշխանության կրքից: Կոնստանտինը վավերացրեց Նիկիայի դավանանքի այլ որոշումներ ևս, որոնց թվում էր Քրիստոսին «Աստծո Որդի, Հոր միակ միածին» կոչելը:

Բառացիորեն, հարյուրավոր ավետարաններ և կրոնական գրքեր թաքցրել են մարդկանցից: Գրերից մի քանիսը գրառել են Հիսուսի աշակերտները և նրանցից շատերը հանդիսանում էին Հիսուսի արարքների ականատեսները: Նիկիայի Խորհուրդը որոշեց կործանել բոլոր ավետարանները, որոնք գրառել են Եբրայերեն, որի արդյունքում այրեցին, ավելի քան երեք հարյուր գիրք: Եթե այդ գրքերը ավելի վավերական չէին, քան ներկայիս չորս ավետարանները, նրանք ունեին համահավասար վավերականություն: Դրանցից մի քանիսը մինչ այժմ մատչելի են, ինչպիսիք են Բարնաբայի Ավետարանը և Հերմանսի Քահանան, որը համաձայնեցվել է Ղուրանի հետ: Բարնաբայի Ավետարանը մինչ այժմ հանդիսանում է Հիսուսի կյանքի և առաքելության միակ ականատեսը: Նույնիսկ այսօր, ամբողջ Բողոքական աշխարհը, Եհովայի Վկաները, Յոթերորդդ Օրվա Աղվենտիստները և այլ աղանդները և դավանանքները դատապարտում են Աստվածաշնչի Հռոմեական Կաթոլիկ տարբերակը, որովհետև այն պարունակում է յոթ «հավելյալ» գրքեր: Բողոքականները համարձակորեն հանել են յոթ

ամբողջական գրքերը իրենց «Աստծո Խոսքից»: Մերժված գրքերի թվին են պատկանում Յուդիթի, Թոբիասի, Բարուքի և Եսթերի գրքերը:

Ինչ վերաբերվում է Հիսուսի Ավետարանի ուսմունքներին, Ինջիլին, Ավետարանի դպիրները հաճախակի նշում են Ավետարանի Հիսուսի քարոզը. (Մատթեոս 9:35, Մարկոս 8:35 և Ղուկաս 20:1): Աստվածաշնչի մեջ պարբերաբար կիրառել են «ավետարան» բառը: Ամեն դեպքում, Հունական խմբագրության Նոր Կտակարանի մեջ «եվանգելիոն» բառը կիրառում են ավետարան բառի փոխարեն, որը թարգմանաբար նշանակում է ավետիս: Հարց է ծագում, թե ո՞ր Ավետարանն է քարոզել Հիսուսը: Նոր Կտակարանի 27 գրքերից միայն մի փոքր հատվածը կարելի է ընդունել որպես Հիսուսի խոսքեր և միայն 27 գրքերից 4 հայտնի են որպես Հիսուսի Ավետարան: Ենթադրաբար Պողոսը գրառել է մնացյալ 23 գրքերը: Մահմեդականները հավատք են ընծայում, որ Հիսուսին տվել են Աստծո «Ավետիսը»: Ամեն դեպքում, նրանք չեն ճանաչում ներկայիս չորս Ավետարանները, որպես Հիսուսի խոսքեր:

Ամենավաղ Ավետարանը հանդիսանում է Մարկոսի ավետարանը, որը գրի է առնվել մոտավորապես 60-75 թվականներին: Մարկոսը հանդիսանում էր Բարնաբասի քրոջ որդին: Մատթեոսը հարկահավաք էր, մի փոքր պաշտոնյա, ով չէր ճանապարհորդել Հիսուսի հետ: Իսկ Ղուկասի Ավետարանը գրառել են ավելի ուշ և փաստացի Մարկոսի և Մատթեոսի Ավետարանների միևնույն աղբյուրներից: Ղուկասը հանդիսանում էր Պողոսի բժիշկը և ինչպես նա, երբեք չէր հանդիպել Հիսուսին: Ի միջիայլոց, արդյո՞ք դուք տեղյակ եք, որ ըստ Մատթեոս 10:2-4



տարբերակի Մարկոսի և Ղուկասի անունները չեն գտնվում Հիսուսի 12 աշակերտների ցուցակի մեջ:

Տասներկու առաքյալների անուններն են. Առաջինը Սիմոն, ում կոչեցին Պետրոս և նրա եղբայր Անդրեասը; Ջեբեդիի որդի Ջեյմսը և նրա եղբայր Հովհաննեսը; Փիլիպոսը և Բարդուղեմեոսը; Թոմասը և մաքսավոր Մատթեոսը; Ալֆատուսի որդի Ջեյմսը և Լեբբեոսը, ում ազգանունը Թադդեոս էր; Սիմոնը Քանանացին և Հուդան Իսկարոթցին, ով մասնեց նրան:

Հովհաննեսի Ավետարանի աղբյուրը այլ է, որը գրառել են մոտավորապես 100 թվականին: Նրան, Հովհաննեսին չպետք է շփոթել աշակերտ Հովհաննեսի հետ, ում 44 թվականին, երկար տարիներ մինչ ավետարանի գրառումը, գլխատեցին Ազգրփիոսը I հրամանով :Հարկ է նշել, որ երկու դար շարունակ վիճաբանության առարկա էր հանդիսանում այն փաստը, թե արդյոք Հովհաննեսի Ավետարանը պետք է ընդունել որպես Հիսուսի կյանքի վստահելի աղբյուր և որ արդյոք այն պետք է ներառել գրերի մեջ:

Ինչպես ես մի ժամանակ, Քրիստոնյաները, պարծանք են ապրում Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններով: Ամեն դեպքում, եթե մենք մտածենք այդ հարցի շուրջ, մենք կարող ենք տեսնել, որ գոյություն չունի Ավետարան ըստ Հիսուսի: Ըստ Արքա Ջեյմսի Նոր Բաց Ստովածաշնչի Ուսումնասիրության հրատարակության, «Ավետարան» բառը ավելացրել են բնօրինակ «Ըստ Հովհաննեսի, Ըստ Մատթեոսի, Ըստ Ղուկասի և Ըստ Մարկոսի» վերնագրերին:

Վաղ ժամանակաշրջանում այս ավետարանին տվել են

Կաթա Մաթթհայոն անվանումը, «Ըստ Մատթեոսի»: Քանի որ առաջարկեցին այս վերնագիրը, այդպես էլ նույնապես կոչեցին այլ ավետարանները, Իսկ ավետարանը բառը ավելացրել են ավելի ուշ ժամանակաշրջանում:

Ոչ Հիսուսը, ոչ էլ մեկ այլ աստվածային ուղղորդություն չի թույլատրել Ավետարանի գրառումները կոչել «Ըստ -----» որևէ մեկի: Մատթեոսի, Ղուկասի, Մարկոսի և Հովհաննեսի այս գրառումները երբեք Ավետարան լինելու նպատակ չեն ունեցել: Ուստի, Մարկոս 1:1 տարբերակը չի կարող հանդես գալ որպես ճշմարիտ հայտարարություն, որ իր գրառումը Հիսուսի Ավետարանն է:

Հարկ է նշել, որ Մահմեդականները պետք է հավատք ընծայեն բոլոր Աստվածային բնօրինակ Գրերին, իրենց Մարգարեներին և ոչ մի տարբերություն չդնեն նրանց միջև. Մուհուֆին (Աբրահամ); Թորային (Մովսես) Սադմոսներին (Դավիթ), Ավետարանին կամ Աստվածաշունչին (Հիսուս) և Ղուրանին (Մուհամմեդ): Ղուրան 3:3 տարբերակը հստակ հայտնում է, որ Ալլահը ուղարկել է Թորան և Ավետարանը: Ամեն դեպքում, այդ գրերից ոչ մեկը այժմ չի պահպանել իր բնօրինակը, բացառությամբ Ղուրանի, որը եկել է ամբողջ մարդկության համար ամենուր և ամեն ժամանակներում:

Ի լրացում այլ պատճառների, թե ինչու է Ղուրանը եկել ամբողջ մարդկությանը, Ինչպես նշել է 18:4-5 տարբերակները, Այն եկել է զգուշացնելու Քրիստոնյաներին Աստծո սարսափելի պատժի մասին, Եթե նրանք չդադարեն ասել.

**«Ալլահը ծնել է որդի»:**

وَيُنذِرَ الَّذِينَ قَالُوا اتَّخَذَ اللَّهُ وَلَدًا (4)

(الكهف: 4)

Մահմեդականները անկեղծորեն հավատք են ընծայում, որ ամենը, ինչ քարոզել է Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) եկել է Աստծուց; Ավետարանը (Ինջիլը). հանդիսանում է Աստծո «ավետիս» և ուղղորդություն Իսրայելի Ջավակներին: Ավետարանների ոչ մի հատվածի մեջ խոսք չի գնում այն մասին, որ Հիսուսը որևէ բառ է գրել, ոչ էլ նշվում է, որ Հիսուսը հրահանգել է որևէ մեկին անել դա: Այսօր առկա «Ավետարանը» հանդիսանում է երրորդ խմբի, մարդկանց ձեռքի աշխատանքը:

Դուրան 2:79 տարբերակը ասում է.

«Եվ անե՞ք նրանց, ովքեր գրել են գիրքը իրենց իսկ ձեռքերով և այնուհետ ասել են. «Այս Ալլահից, (Աստծուց է)»: Որպեսզի շահարկեն այն նողկալի գնով: Այսպիսով անե՞ք նրանց, ինչ նրանց ձեռքերը գրել են և անե՞ք նրանց այն բանի համար, ինչ նրանք վաստակում են դրանից»:

فَوَيْلٌ لِلَّذِينَ يَكْتُوبُونَ الْكِتَابَ بِأَيْدِيهِمْ ثُمَّ يَقُولُونَ هَذَا مِنْ عِنْدِ اللَّهِ  
لَيْسَتْ رُؤْيَا بِهِ تَمَنَّا قَلِيلًا فَوَيْلٌ لَهُمْ مِمَّا كَتَبَتْ أَيْدِيهِمْ وَوَيْلٌ لَهُمْ مِمَّا  
يَكْسِبُونَ

(البقرة: 79)

Ավարտելով գլուխը, ես ցանկություն ունեմ ձեզ հետ կիսել մեկնաբանությունները, որոնք արվել են 1996 թվականի Ապրիլի 8 հրատարակված "Հիսուսի փնտրտուքով" հոդվածից, Ամն, Նորություններ և Աշխարհի Ջեկույց, էջ.47-53

- Ռոբերտ Ֆանկը, հայտնի աստվածաշնչյան գիտնականը և 50 կրոնական պրոֆեսորները եզրակացրեցին, որ ավելի քան 20 տոկոս խոսքերը և ավելի նվազ արարքները, որոնք վերաբերվում են Հիսուսին, վավերական են: Հեռացված գաղափարներից են Տիրոջ Աղոթքը, խոսքերը, որոնք ասվել են խաչի վրա և Հիսուսի աստվածայնության յուրաքանչյուր հայտարարությունը, կուսական ծնունդը, նրա հրաշքների մեծամասնությունը և մարմնական հարությունը: (էջ.49)
- Ջոն Մեյերը, Վաշինգտոնի Ամերիկայի Կաթոլիկ Համալսարանի պրոֆեսորը եզրակացրեց.
- Նա (Հիսուսը) ծնվել է մոտավորապես 7 թվականին Նազարեթում, ոչ թե Բեթլեհեմում, ինչպես ասում է Ղուկասը:
- Անկախ պաշտոնական Կաթոլիկ ուսմունքի, որ Մրախամը, Հիսուսի մայրը, ամբողջ իր կյանքի ընթացքում պահպանեց կուսությունը, Մեյերը ասաց, որ Հիսուսը ուներ չորս եղբայր և նվազագույնը երկու քույր, մանրամասները, որոնք հայտնվում են Մարկոսի և Հովհաննեսի ավետարանների և Պողոսի գրերի մեջ: Մեյերը ասում է, որ Հիսուսի կուսական ծնունդը, «չի կարելի ապացուցել կամ հերքել» պատմական հետազոտությամբ:
- Գալիլեայում Նա ունեցավ հակիրճ ժամերգություն որպես ուսուցիչ, մարգարե և արարքների գործիչ, որոնցից մի քանիսը ընկալվում են որպես հրաշքներ:
- Նրան ձերբակալեցին Երուսաղեմում և Պիղատոսի հրամանով խաչեցին ինչ որ տեղ, մոտ 30

թվականին: Նրա հետևորդները հայտնում են, որ նա հարություն է առել: (Էջ. 50)

- Ջոն Քրոսանը, ժամանակակից փնտրող մարդկանցից ամենաբեղմնավորը, Հռոմեական Կաթոլիկ նախկին քահանան և Չիկագոյի, Դեպոլ համալսարանի պատվելի պրոֆեսորը, կարծում է, որ իր հավաքագրած վկայությունը, չի բացառում Քրիստոնեության անադոյթային ուսմունքների մեծամասնությունը: Նա ասում է, որ Վերջին ընթրիքի աստվածաշնչյան հաշիվները և հարություն առած Հիսուսի տեսիլքները, ուղղակի փորձ են հանդիսանում արտահայտել իր հավատարիմ հետևորդներին իրենց «շարունակական փորձը» և Խաչելությունից հետո իր ներկայությունը: (Էջ 52)

## ԱՎԵՏԱՐԱՆ- ԻՍՐԱՅԵԼԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Շատ քրիստոնյաներ հավատք են ընծայում, որ Հիսուսի առաքելությունը ուղղված էր բոլոր ժողովուրդներին: Երբ նրան մոտեցավ Քանանացի մի կին, ով խնդրեց Հիսուսին բժշկել իր դստերը, սկզբում նա մերժեց ասելով (Մատթեոս 15:24)

«Ինձ ուղարկել են Իսրայելի տան մոլորյալ գառների համար...»

Նույնպես, Մատթեոս 1:21 տարբերակը ասում է.

«Եվ նա կծնի որդի և կկոչի Հիսուս, քանի որ նա կփրկի իր ժողովրդին իրենց մեղքերից»:

Նույնպես, Հիսուսը իր 12 աշակերտներին հրահանգեց գնալ և քավություն քարոզել Իսրայելի տան մոլորյալ գառների և ոչ թե Գաղաթացիներին կամ Սամարացիներին: (Մատթեոս 10:5-6)

«Այդ տասներկուսին Հիսուսը ուղարկեց և պատվիրեց նրանց ասելով. Մի գնացեք Գաղաթացիների ուղղով և մի մտեք Սամարացիների որևէ քաղաք. Այլ գնացեք Իսրայելի տան մոլորյալ գառների մոտ: Եվ հասնելուն պես քարոզեք ասելով, երկնքի արքայությունը ձեռքի մեջ է»:

Պարզ է, որ Հիսուսին և 12 աշակերտներին ուղարկել են Իսրայելի ժողովրդի, այլ ոչ թե աշխարհի համար: Այսպիսով Հովհաննես 3:16 տարբերակը ասում է. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ նա տվեց իր միածին որդուն, որ նա, ով հավատք կընծայի նրան, չի անհայտանա, այլ կունենա հավերժ կյանք», նա բառը

չպետք է ուղղել յուրաքանչյուրին, այլ Իսրայելի զավակներին:

Ըստ Մատթեոս 5:17-18 տարբերակների, Հիսուսը մեկ այլ նշանավոր խոսքերն էին.

«Մի կարծեք, որ ես եկել եմ կործանել օրենքը (Թորան) կամ մարգարեներին. (Ադամին, Աբրահամին, Մովսեսին, Նոյին, Դավիթին և այլն): Ես չեմ եկել կործանելու, այլ լրացնելու: Քանի որ իրոք, Ես ասում եմ ձեզ երկինքը և երկիրը չեն անցնի, մինչ լիովին չի կատարվի օրենքի իմաստուն վերնագրերը»:

Մատթեոս 8:4 տարբերակի մեջ Հիսուսը արդեն առողջ բորոտին հրահանգում է «գնալ Քահանայի մոտ» և առարկել այն, ինչը սահմանել է Մովսեսը: Որոշ քրիստոնեական աղանդներ դեմ են գնում այս տարբերակին և հայտնում են, որ Հին Կտակարանը հնացած է և դրան փոխարինել է Նոր Կտակարանը: Ինչպես կարող եք հասկանալ, Հիսուսը գործ չի ունեցել Հին Կտակարանի և դրա ուսմունքների հետ: Այդ դեպքում, ինչու՞ են որոշ քրիստոնյաները անում դա:

Ահա Աստվածաշնչի Բառարանի մեջբերումը, որը վերաբերվում է մերօրյա Քրիստոնեության Տաս Պատվիրանների կիրառելիությանը.

Աստծո տված տաս օրենքները հանդիսանում են ամենօրյա կյանքի ուղղորդություն: Դրանք հանդիսանում են Աստծո և Նրա մարդկանց միջև առկա ուխտի մի մաս «Ելք 34:28; Երկրորդ Օրենք 4:13; 10:4»: Այս օրենքները հաճախ կոչում են Դեկալոգներ, որը Հունարեն բառ է, որն էլ իր հերթին թարգմանաբար նշանակում է «տաս բառեր»:

Չնայած Աստված իր Տաս Պատվիրանները տվել է Իր մարդկանց Մովսեսի միջոցով Մինա լեռան վրա ավելի քան 3000 տարի առաջ, նրանք մինչ այժմ հարմար են: Նրանք ունեն մնայուն նշանակություն, քանի որ Աստծո բնույթը անփոփոխ է: Այս օրենքները ծագում են Աստծուց և Նրա հավերժ բնույթից, ուստի, նրանց բարոյական արժեքները չեն կարող ենթարկվել փոփոխության:

Աստծո օրենքների գալուց մոտ 1300 տարի անց, Հիսուսը աջակցեց դրանց, կոչելով «պատվիրաններ» և դրանցից հինգը նշեց հարուստ երիտասարդ կառավարչի համար: (Մատթեոս 19:16-22) Լեռան վրա տեղի ունեցած քարոզի մեջ Հիսուսը ցույց տվեց, որ Իր գալուստը չի չեղարկում Պատվիրանները: Նա մասնավորապես նշում է օրենքները, որոնք դեմ են սպանությանը (Մատթեոս 5:21) և անառակությանը (Մատթեոս 5:27):

Փաստորեն Հիսուսը շատ բարձր դասեց այս օրենքները, երբ պահանջեց պահպանել դրանց և հոգևոր, և օրինական կողմերը: Նա դրեց խրախուսության Իր հավերժ կնիքը օրենքի վրա հայտարարելով. «Մի կարծեք, որ ես եկել եմ կործանելու Օրենքը կամ Մարգարեներին: Ես չեմ եկել կործանելու, այլ լրացնելու»: (Մատթեոս 5:17-19)

Սուրբ Աստվածը Իր Պատվիրանները արձակեց Մինայ Լեռան բարձունքից ծխի և կրակի պայմաններում—որոնք հանդիսանում են Նրա հզորության, բարձրության և հեղինակության տեսանելի արտահայտությունները. (Ելք 19:16 – 20:17) Ավելի ուշ Պատվիրանները փորագրեցին քարի երկու տախտակների վրա, «գրված Աստծո մատով» (Ելք 31:1): Աստվածաշունչը մի քանի անգամ նշում է այն հոյակապ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել



օրենքի իրականացման ընթացքում, միգուցե տոնը նշելու համար: (Ելք 19:16 -19 Երկրորդ Օրենք 4:11-12)

Տաս Պատվիրանները ձևավորում են Աստծո և Նրա ժողովրդի միջև առկա հատուկ Ուխտի սիրտը: Նա ասաց նրանց, «Այժմ ուստի, եթե դուք իրոք հնազանդվեք Իմ ձայնին և պահպանեք Իմ ուխտը, դուք կլինեք հատուկ գանձը Ինձ համար, բոլորից վեր... Եվ դուք կլինեք Ինձ համար քահանաների արքայություն և սուրբ ժողովուրդ»: (Ելք 19:5) Այս տարբերակները նույնպես նշում են, որ իրենց հնազանդությունը Պատվիրաններին պետք լինի Իսրայելի գոյության հիմքը, որպես Աստծո հատուկ ժողովրդի:

Աստված երբեք մտադրություն չի ունեցել Տաս Պատվիրանները դարձնել կարգավորման հավաքածու, որի միջոցով Իսրայելի ժողովուրդը կարող է թողություն վաստակել: Աստծո շնորհը արդեն ազատորեն տրվել էր: Մա անդիմադրելի կերպով ներկայացնում է Իսրայելի համար նախատեսված Նրա փրկությունը Եգիպտական գերությունից: (Երկրորդ Օրենք 4:37) Ուստի, ուխտի հարաբերության հիմքում ընկած է աստվածային Շնորհը: Նույնիսկ, Տաս Պատվիրանները Աստված ներկայացրեց Իր փրկության հիշատակությամբ: (Ելք 20:2)

Տաս Պատվիրանները այսօր էլ արդիական են: Աշխարհը հուսահատորեն կարիք ունի տեսնելու Աստծո անունը և բնույթը, Քրիստոնյաների կյանքի դրսևորման գործում, ովքեր մինչ այժմ լուրջ են ընդունում Նրա Խոսքը: Այս Պատվիրանները, որոնք մասնավորապես զուգորդվում են Քրիստոսի ուսմունքներով, մինչ այժմ հանդիսանում են գործնական ապրելակերպի լավագույն ուղղորդությունը, որը հայտնի է մարդուն:

### Ընթերցեք Հռոմեացիներ 13:8 և 9 տարբերակները

«Ոչ ոքի ոչինչ պարտական մի եղեք, բացառությամբ դիմացինին սիրելուց, քանի որ նա, ով սիրում է դիմացինին, լրացնում է օրենքը: Այդ իսկ պատճառով դուք չպետք է անառակություն գործեք, դուք չպետք է սպանեք, դուք չպետք է գողություն անեք, դուք չպետք է կեղծ վկայություն տաք, դուք չպետք է տենչաք և եթե լինի որևէ այլ պատվիրան, Այն համառոտ իմաստավորվում է այս ասացվածքով, մասնավորապես, Դուք պետք է սիրեք ձեր հարևանին, ինչպես ձեզ»:

Կիրառելով Հռոմեացիներ 13:8-9 տարբերակի մեջ Պողոսը Քրիստոնյաներին արդարացնում է իրենց մարմնի յուրաքանչյուր հատվածով Աստծուն երկրպագելու իրենց պարտականությունից, հիմնավոր ասելով, որ այն ամենը, ինչ պետք է անի անհատը, Օրենքը լրացնելու համար, (Թորան, Հին Կտակարանը), դիմացինին սիրելն է, ինչպես ձեզ: Հիսուսը չի բացառում մեր առաջին և հիմնական պարտականությունը, որն էլ առաջին և ամենամեծ պատվիրան է, այսինքն երկրպագել միայն Մեկ աստծո և երկրորդ, ինչպես շեշտել է Մարկոս 12:29-31 տարբերակները, սիրել մեր հարևանին:

Եվ Հիսուսը պատասխանեց նրան. «Բոլոր Պատվիրաններից առաջինը հետևյալն է. Լսիր օվ Իսրայել, Տերը, մեր Աստվածը մեկ Տեր է, և դուք պետք է սիրեք Տիրոջը, ձեր Աստծուն ամբողջ ձեր սրտով և ամբողջ ձեր հոգով և ամբողջ ձեր մտքով և ամբողջ ձեր հզորությամբ, սա առաջին պատվիրանն է: Եվ երկրորդը այսպիսին է, որ դուք պետք է սիրեք ձեր հարևանին ինչպես ձեզ: Ոչ մի այլ պատվիրան ավելի հզոր չէ, քան այս մեկը»:

Գաղաթացիներ 5:2 տարբերակը ընթերցելուց հետո. «Զգուշացեք, ես, Պողոսը ասում եմ ձեզ, որ եթե դուք թլպատվեք, Քրիստոսը ձեզ ոչնչով չի օգնի», ես հասկացա, որ Պողոսը վերացրեց թլպատությունը, որը առկա էր օրենքի, Թորայի մեջ: Փաստացի Հիսուսը և Հովհաննես Մկրտիչը երկուսն էլ թլպատված էին: Պողոսի այս վերացումը հակասում է Հիսուսի և Աբրահամի ուսմունքներին: Քանի որ բոլոր Մահմեդականները և Քրիստոնյաները սերվում են Աբրահամի սերմից, ապա թլպատումը հանդիսանում է պարտադիր գործողություն: Փաստորեն, Աբրահամը ոչ Հրեա էր, ոչ էլ Քրիստոնյա և նրա կրոնը, որին մենք պետք է հետևենք, հանդիսանում է Մեկ Ճշմարիտ Աստծո երկրպագությունը:

Մտաբերելով Մատթեոս 5:17-18 տարբերակները, թույլ տվեք ներկայացնել Նոր Կտակարանի մեկ այլ անհամապատասխանությունը: Մարկոս 16:15 տարբերակը նշում է, որ Հիսուսը ասաց.

«Գնացեք դուք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեք ավետարանը յուրաքանչյուր արարածի»:

Սա հակասում է Մատթեոս 1:21, 10:5-6, 15:24 և 28:19 տարբերակներին: Անկախ ձեր ունեցած Աստվածաշնչի, որը դուք կիրառում եք, Մատթեոս 28:19 տարբերակի մեջ դուք կարող եք ընթերցել «բոլոր ազգերը» կամ «բոլորը, ազգերը», որը կարող է նշանակել Իսրայելի տասներկու ցեղերը, ինչպես ասել է Հիսուսը Մատթեոս 15:24 տարբերակի մեջ:

## ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Երրորդությունը, որի մասին ես տեղյակ եմ, Աստվածաշնչյան չէ: Երրորդությունը բառը գոյություն չունի ոչ Աստվածաշնչի, ոչ էլ աստվածաշնչյան բառարանների մեջ: Հիսուսը երբեք չի ուսուցանել երրորդություն և երբեք չի նշել դա:

Երրորդության ձևավորումը ներկայացրել է Ալեքսանդրայի եգիպտացի սարկավագ Աթենասուսը և որը նույնպես ընդունեց Նիկիայի Ժողովը, Հիսուսի երկրից հեռանալու ավելի քան երեք դար անց: Ժողովի այլ մարդակերտ որոշումները աջակցում են Հռոմեական Կիրակի օրվա հայտարարությունը, ինչպես Քրիստոնյա Շաբբաթը և Դեկտեմբերի 25-ը որպես Հիսուսի ծննդյան օրվա գաղափարը:

Սա կատարվել է նշելու տոները, որոնք տեղի են ունենում հեթանոս աստվածների ծննդյան նույն օրերին, ինչպիսիք են Նիմրոդը, Բաբելոնյան աստվածը, Քրիշնան, Հինդու աստվածը, Միթիրան Հունա-հռոմեական աստվածը և Դիոնիսիոսը կամ Բաքոսը Հունաստանից, ում կոչել են Յուպիտերի միաձին որդի և ով ծնունդ էր առել կույս մորից, ում կոչեցին Դեմետրիոս և օրը նշվեց Դեկտեմբերի 25-ը:

Ակնհայտ է, որ Աստվածաշունչը կանխատեսեց և արգելեց տոնաձառի հարդարումը Երեմիա 10:2-5 տարբերակի մեջ:

«Ուստի, Տերը ասաց. Մի ուսուցանեք հեթանոսի ուղղին և մի սարսափեք երկնքի նշաններից, քանի որ հեթանոսները սարսափել են դրանցից: Քանի որ մարդկանց ավանդույթները սին են, քանի որ մեկը անտառից ծառ է

կտրում, որը հանդիսանում է աշխատավորի ձեռքի աշխատանքը, կացինով: Նրանք հարդարում են այն արծաթով և ոսկով. Նրանք ամրացնում են այն մեխերով և մուրձերով, որպեսզի այն տեղավորվի չլինի»:

Մատթեոս 28:19, Հովհաննես 14:11 և Հովհաննես Ա 5:7 և 8 տարբերակները քրիստոնյաները կարող են կիրառել Երրորդությունը հաստատելու համար: Երրորդության ուսմունքը ուղղակի եզրակացրել են Հովհաննես Ա 5:7 տարբերակից, որը հայտարարում է.

«Քանի որ գոյություն ունեն երեքը, որոնք վկայում են երկնքում, Հայրը, Խոսքը և Սուրբ Հոգին. և այս երեքը մեկն են»:

Այս տարբերակը վաղուց բացահայտել են որպես շինծու և Նոր Կտակարանի Հունական տեքստի անվավեր լրացում: Ավելի ուշ, Աստվածաշնչի քրիստոնյա գիտնականները գտան, որ այս ուսմունքը ընդմիջարկություն է Արքա Ջեյմսի տարբերակի մեջ: Փաստորեն ոչ նվազ քան 32 քրիստոնյա գիտնականների խումբը ամենաբարձր կարգինալի հետ, ում խորհուրդ էին տվել տարբեր 50 աղանդների ներկայացուցիչների, 1949 թվականին, հանգեցին Նոր Կտակարանի վերանայված տիպական տարբերակին և 1952 թվականի ամբողջ Աստվածաշնչին, հեռացնելով նախորդ հատվածը:

Նոր Կտակարանը Հիսուսին բազմիցս վերաբերվում է որպես Աստծո ծառայի (տես, օրինակ Մատթեոս 12:18):

Այժմ ընթերցեք Գործք 2:22 տարբերակը

«Իսրայելցիներ, լսեք. Նազովրեցի Հիսուսը մարդ էր, ում Աստված լիազորել էր ձեզ հրաշքներով, նշաններով, որոնք

Աստված ձեր մեջ գործել է նրա միջոցով, ինչպես դուք ինքներդ տեղյակ եք»:

Ապա, ինչպե՞ս է կարող Հիսուսը միննույն ժամանակ լինել Աստծո ծառա և Աստված: Ընթերցեք Հովհաննես 17:21 տարբերակը. «Որ նրանք բոլորը կարող են լինել մեկը, ինչպես դու Հայր, իմ մեջ ես և ես քո մեջ, որ նրանք նույնպես կարող են լինել մեր մեջ. Որ աշխարհը հավատա, որ դու ուղարկել ես ինձ» և դուք եզրակացնեք, որ եթե Աստվածը, Հիսուսը և Մուրք Հոգին կազմում են Երրորդության մեկ միություն, ապա ներառելով աշակերտներին, նրանք պետք է Աստված կազմեն, տասնհինգի միությամբ»: Ըստ Հովհաննես 14:9 տարբերակի, Հիսուսը Աստված է.

«... նա, ով տեսել է ինձ, տեսել է Հորը»:

Այժմ եկեք ընթերցենք Հովհաննես 4:24 տարբերակը «Աստված Հոգի է...» և Հովհաննես 5:37 տարբերակը. «... դուք ոչ լսել եք Նրա ձայնը երբևէ, ոչ էլ տեսել եք Նրա տեսլիքը», և Թիմոթեոս Ա 6:16 տարբերակը «... ում ոչ մի մարդ չի տեսել ոչ էլ կարող է տեսնել...»:

Ինչպես նշել է Ելք 33:20 տարբերակը, մարդկային տեսողությունը չի կարող դիմակայել տեսնելու Աստծո փառքը և ապրել, այսպիսով, ինչպե՞ս է կարող մարդկային մարմինը դիմակայել ունենալ այս Փառքը եզրափակված դրան»: Աշակերտները տեսել են Հիսուսին, մարգարեին, այլ ոչ թե Աստծուն: Հովհաննես 5:37 տարբերակը ասում է.

«...դուք երբեք չեք լսել Նրա, Աստծո ձայնը, ոչ էլ տեսել եք Նրա տեսլիքը», նույնպես հակասում է Մատթեոս 3:17 տարբերակին, որտեղ ասվում է, որ Աստծուն լսել են, ով ասել է. «սա իմ սիրելի Որդին է, ով ինձ հաճոյացել է»:

Անհնար է որոշել, թե արդյոք այն հանդիսանում է սուրբ հոգին, սուրբ ոգին, ճշմարտության ոգին, Աստծո ոգին կամ ոգին ընդհանուր առմամբ, որը ենթադրաբար կազմում է «երրորդությունը»: Քանի որ Նելսոնի Աստվածաշնչի Բառարանը նշում է, որ Սուրբ Հոգին և Սուրբ Ոգին նույնն են, որն էլ հակասում է որոշ Քրիստոնյա աղանդների հավատքին: Ամեն դեպքում, աստվածաշնչի մեջ առկա են տարբերակներ, որոնք պատկերում են տարբեր ոգիների տարբեր գործողություններին.

Տարբերակներ	Ոգիներ
Եվ հրեշտակը պատասխանեց և ասաց նրան, Սուրբ Հոգին կգա քեզ: Ղուկաս 1:35	Սուրբ Հոգին – Հրաշքներ է ներկայացնում Աստծո հրամանով.
Արդյո՞ք դուք տեղյակ չեք, որ դուք հանդիսանում եք Աստծո տաճարը և որ Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ: Կորնթացիներ Ա 3:16	Աստծո Հոգին - Բնակվում է անհատի մեջ:
Նույնիսկ ճշմարտության Հոգին, որը աշխարհը չի կարող ընդունել... Հովհաննես 14:17	Ճշմարտության Հոգին – որը աշխարհը չի կարող ընդունել
Տուր նրանց Սուրբ Հոգին, որը խնդրում են : Ղուկաս 11:13	Սուրբ Հոգի – Տրված է նրանց, ովքեր խնդրում են: Բնակվել այնտեղ.

<p>Սակայն, երբ գա Մխիթարիչը, ում ես կուղարկեմ ձեզ Հորից, նույնիսկ Ճշմարտության Հոգին, որը առաջ է գալիս Հորից, նա կվկայի ինձ: Հովհաննես 15:26</p>	<p>Մխիթարիչը Սուրբ Հոգին, - Ով պետք է գա Հիսուսից հետո, թողեց երկիրը:  Ճշմարտության Հոգին - Որը գալիս է Հորից:</p>
<p>Ում դուք նույնպես վստահում եք, դրանից հետո դուք լսում եք ճշմարտության խոսքը, ձեր փրկության ավետարանը, ում դուք նույնպես դրանից հետո դուք հավատում եք, ձեզ կնքել են խոստման այդ Սուրբ Հոգով: Եփեսացիներ 1:13</p>	<p>Սուրբ Հոգին – Հոգին, որը խոստացել են:</p>
<p>Հիսուսը պատասխանեց, «Իրոք, իրոք ես ասում եմ ձեզ, եթե մեկը ծնվեր ջրից և Հոգուց, նա չէր կարող մտնել Աստծո արքայությունը: Հովհաննես 3:5</p>	<p>Հոգուն, ընդհանուր առմամբ – կարող են ընդհանուր, ինչպես նշվել է, վերոհիշյալ հոգիները, ոգիները.</p>
<p>Եվ Աստված ուղարկեց Գաբրիել Հրեշտակին... Ղուկաս 1:26</p>	<p>Հրեշտակ Գաբրիելը – Նշվում է որոշակիորեն:</p>



Այս պահին թույլ տվեք նշել, թե ինչ է ասում Ղուրանը (5:73) Երրորդության մասին.

«Նրանք, չեն հավատում, ովքեր ասում են. Ալլահը երեքից մեկն է Երրորդության մեջ, քանի որ գոյություն չունի ոչ մի աստված բացառությամբ Մեկ Աստծո: Եթե նրանք չդադարեն իրենց խոսքը, անարգանքը, իրոք, ծանր պատիժ տեղի կունենա նրանց միջի անհավատներին»:

لَقَدْ كَفَرَ الَّذِينَ قَالُوا إِنَّ اللَّهَ ثَلَاثَةٌ ۚ وَمَا مِنْ إِلَهٍ إِلَّا إِلَهٌ وَاحِدٌ ۚ  
وَإِنْ لَمْ يَنْتَهُوا عَمَّا يَقُولُونَ لَيَمَسَّنَّ الَّذِينَ كَفَرُوا مِنْهُمْ عَذَابٌ أَلِيمٌ

(المائدة: 73)

Արդյո՞ք սա այն չէ, ինչ նշել է Մովսեսի օրենքը Թորան, Հին Կտակարանը, առաջին պատվիրանի մասին – որն է Աստծո Եզակիությունը, որը Հիսուսը չէր եկել կործանելու, այլ լրացնելու, ինչպես խստորեն փոխանցել է Հովհաննես 5:46-47 տարբերակը:

«Քանի որ, եթե դուք հավատք եք ընծայել Մովսեսին, դուք պետք է հավատք ընծայեք ինձ. Քանի որ նա գրառեց իմ մասին: Մակայն, եթե դուք հավատք չեք ընծայում նրա գրառումներին, ինչպե՞ս եք դուք կարող հավատք ընծայել իմ խոսքերին»:

Ոչ Մովսեսը, ոչ էլ Հիսուսը չեն խոսել Երրորդության մասին. այսպիսով, ինչու՞ պետք է խոսեն Քրիստոնյաները:

Պետք է ավելացնել 1997 թվականի օգոստոսի 25–ին Նյուգվիբում տպագրված հատուկ հղումը, վերնագրված Փառք Մարիամին, որը վերաբերվում է Երրորդությանը.

- Սուրբ Երրորդությունից հետո, հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու թափ առնող շարժումը

ցանկություն հայտնեց, որ Պապը հայտնի նոր, հակասական ուսմունք, որ Մարիամը, Հիսուսը մայրը, հանդիսանում է համափրկիչ: Ուստի, Սուրբ Երրորդության փոխարեն պետք է երևան գա ինչ որ տեսակի Սուրբ Քառյակ, խաղալով բազմակի Հոր դստեր, Որդու մոր և Սուրբ Հոգու կողակցի դերեր:

## **ՀԻՍՈՒՍԸ ԱՍՏՎԱԾ**

Ընդհանուր տեսակետ է հանդիսանում այն, որ Հիսուսի աստվածայնությունը ներկայացրել է Պողոսը, ով երբեք չէր հանդիպել Հիսուսին կամ նրա հետևորդներին և որը դարեր շարունակ հաստատվել էր միլիոնավոր Քրիստոնյաների մեռած մարմինների վրա, որը առաջ քաշեց Կաստիլիոսի հայտնի դիտողությունը. «Մարդ այրելը չի ապացուցում ուսմունքը»: Ներկայացնելով Հիսուս Քրիստոսի աստվածայնության ուսմունքը, հաշվի առեք այս երկու կարևոր տարբերակները.

Մատթեոս 5:17 և 18 տարբերակները ասում են «Մի կարծեք, որ ես եկել եմ կործանելու օրենքը կամ մարգարեներին, ես չեմ եկել կործանելու, այլ լրացնելու...»

Արդյո՞ք Հիսուսը Աստված է: Որոշ Քրիստոնյաներ կարող են ասել այո և կիրառել Հովհաննես 1:1 տարբերակը, որը ասում է. «Սկզբում Խոսքն էր և Խոսքը Աստծո հետ էր և Խոսքը Աստված էր»: Սակայն հիշեք, թե ինչ է ասել Հովհաննես 5:37 տարբերակը «ոչ մի մարդ չի տեսել կամ լսել Աստծուն»: Այսպիսով, կիրառելով Հովհաննես 1:1 տարբերակը որպես աջակցություն, Հիսուսի Աստված լինելու գաղափարին, կարելի է ընկալել, որ գոյություն ունեն նվազագույնը երկու Աստված, Աստվածը և Հիսուսը: Թույլ տվեք նշել Հովհաննես 1:1 տարբերակին հակասող այլ տարբերակներ, որոնք կարելի է գտնել Երկրորդ Օրենք 4:39, Երկրորդ Օրենք 6:4, Իսահակ 43:10-11, Իսահակ 44:6 և Իսահակ 45:18 տարբերակների մեջ: Քանի որ Իսահակ 43:10-11 տարբերակը հայտնում է, որ բացի Աստծուց գոյություն չունի այլ փրկիչ և Իսահակ 45:18

տարբերակը եզրակացնում է, որ միայն Աստված է հանդիսանում Արարիչ, ոչ այլ մեկը, նույնիսկ Հիսուսը: Այլ տարբերակները, որոնք աջակցում են Աստծո եզակիության գաղափարին, ինչպես ամբողջ Ղուրանը, կարելի է գտնել Երկրորդ օրենք 4:35, Ելք 8:10, Թագավորաց Բ 7:22, Թագավորաց Գ 8:23, Մնացորդաց Ա 17:20, Սաղմոսներ 86:8, 89:6 և 113:5, Օսեե 13:4 և Չաքարիա 14:9 տարբերակների մեջ:

Նոր Կտակարանի մեջ Հիսուսը մասնավորապես ասել է, որ նա չի եկել կործանելու օրենքը և Աստծո եզակիության հետ իր հարաբերությունը նա հաստատել է Մարկոս 12:29 տարբերակի մեջ.

«Եվ Հիսուսը պատասխանեց նրան, բոլոր պատվիրաններից առաջինը հանդիսանում է. Լսիր, օվ Իսրայել. Տերը, մեր Աստվածը, մեկ Տեր է»:

Եվ Կորնթացիներ Ա 8:4 տարբերակը ասում է.

«... ոչ մի այլ Աստված այլ մեկը»:

Այժմ, արդյո՞ք Հովհաննես 1:1 տարբերակը ճիշտ է և այլ մյուս տարբերակները սխալ, թե հակառակը: Ակնհայտ է, որ Հիսուսը փորձում է Իսրայելի Չավակներին ուսուցանել Հին Կտակարանի առաջին պատվիրանները (Մարկոս 12:29-30, Ելք 20:2-5) և որ մեղքերի թողությունը անհրաժեշտ է Երկնքի Արքայության համար (Մատթեոս 4:17 և Մարկոս 1:15): Վերջապես Մատթեոս 19:16-17 տարբերակները նույնպես փոխանցում են Աստծո Եզակիությունը և տալիս են ուղղորդություն, որը հիմնված է Հին Կտակարանի պատվիրանների վրա, ըստ որոնց կարելի է հավերժ կյանք մտնել.

«Եվ տեսեք, մի մարդ եկավ և ասաց նրան, Հիսուսին, Բարի ուսուցիչ, ի՞նչ բարի գործ պետք է ես գործեմ հավերժ կյանք ունենալու համար: Այսպիսով, նա ասաց նրան, Ինչու՞ ես դու ինձ բարի կոչում. – Ոչ ոք բարի չէ բացառությամբ Մեկի, դա Աստվածն է: Սակայն, եթե դուք ցանկություն ունեք հավերժ կյանք մտնել, պահպանեք պատվիրանները»:

Հովհաննես 1:1 տարբերակը ձեզ այլ կերպ ներկայացնելու համար, եկեք տեսնենք, թե ինչ է ասում Ղուրանը Հիսուսի և Խոսքի մասին: Գլուխ 3:45-ի մեջ ասվում է.

«Տեսեք, հրեշտակները ասացին. «Օվ Մարիամ, Ալլահը քեզ տվել է Խոսքի ավետիս Իրենից. Նրա անունը կլինի Հիսուս Քրիստոս, Մարիամի որդի, պատիվ այս և Հանդերձյալ աշխարհում և Ալլահի մերձավորներից»»:

إِذْ قَالَتِ الْمَلَائِكَةُ يَا مَرْيَمُ إِنَّ اللَّهَ يُبَشِّرُكِ بِكَلِمَةٍ مِّنْهُ اسْمُهُ الْمَسِيحُ  
عِيسَى ابْنُ مَرْيَمَ وَجِيهًا فِي الدُّنْيَا وَالْآخِرَةِ وَمِنَ الْمُقَرَّبِينَ

(آل عمران: 45)

Այս տարբերակը և Ղուրանի 3:39 և Կորնթացիներ Ա 3:32 տարբերակները Հիսուսին համարում են Ալլահի խոսք.

«Եվ դուք Քրիստոսին եք և Քրիստոսը Աստծունն է»:

Միգուցե Հովհաննես 1:1 տարբերակը պետք է գրառեք «... և Խոսքը Աստծուց էր»: Աստվածաշնչի մեջ գոյություն ունեն տարբերակներ, որոնք աջակցում են այն գաղափարին, որ Խոսքը պատկանում էր Աստծուն. Հովհաննես 5:30-31, Հովհաննես 8:40, Հովհաննես 12:49 ր Հովհաննես 17:3 տարբերակները:

Պարզ է, որ Հիսուսը երբեք չի հայտնել իր աստվածայնությունը Աստծո հետ.

«Ես ինքս ոչինչ չեմ անում», (Հովհաննես 8:28) «Իմ Հայրը ավելի հզոր է, քան ես», (Հովհաննես 14:28), «Տերը, մեր Աստվածը, մեկ Տեր է», (Մարկոս 12:29), «Իմ Աստված, իմ Աստված, ինչու՞ ես դու ինձ լքել», (Մարկոս 15:34) և «Հայր, քո ձեռքերն եմ ես հանձնում իմ հոգին»: (Ղուկաս 23:46)

Այնուհետ, Ղուկաս 4:1-13 տարբերակը մեզ ասում է, որ քառասուն օր սատանան գայթակղում է Հիսուսին: Ջեյմս 1:13 տարբերակը ասում է.

«... քանի որ Աստծոն հնարավոր չէ գայթակղել չարով...»

Վերջապես, Նոր Կտակարանը շատ անգամ Հիսուսին վերաբերվում է որպես «Աստծո ծառայի»: (տես Մատթեոս 12:18) Այդ դեպքում ինչպե՞ս է կարող Հիսուսը միաժամանակ լինել և Աստծո ծառա, և Աստված:

Մինչ եզրահանգումը, եկեք ներկայացնել ևս մեկ գաղափար: Ղուկաս 5:16 տարբերակի մեջ, երբ Հիսուսը հեռանում էր անապատ աղոթելու համար, ու՞մ է նա ուղղում այն: Իրեն, թե՞ Աստծուն: Ընթերցեք Ղուկաս 11:2-4 տարբերակները.

«Եվ նա ասաց նրանց. «Երբ դուք աղոթեք, ասեք, Մեր Հայր, որը երկնքում է, փառաբանվի քո անունը: Քո արքայությունը: Քո կամքը լինի, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Տուր մեզ օր օրի մեր հանապազորյա հացը: Եվ ների՛ր մեզ մեր մեղքերը; քանի որ մենք նույնպես ներում ենք յուրաքանչյուրին, ովքեր պարտապան են մեզ: Եվ մի տար մեզ ի փորձություն, այլ փրկի՛ր մեզ չարից»»:

Արդյո՞ք այս աղոթքի որևէ հատվածի մեջ, Հիսուսը ասել է, «Հիսուսի անունով» երբ նա աղոթում էր: Եթե այս աղոթքը հանդիսանում էր հարցի պատասխանը. Ինչպե՞ս մենք կարող ենք աղոթել: Աստվածավախ անհատը աղոթքի մեջ կարող է ստանալ ամենը, ինչի կարիք ունի: Ամենակարևորը մեր մեղքերի թողությունն է: Այս աղոթքը աջակցում է Հիսուսին այն ավետիսին, որ Աստված ներում է մեղքերը, միայն, եթե անհատը ապաշխարհի և դադարի սխալ արարքներ գործել: Ինչպես նշել է Մատթեոս 4:17 տարբեկար, այս ուղերձը հանդիսանում է Հիսուսի ուսմունքի սկիզբը:

«Քանի որ, այդ ժամանակ Հիսուսը սկսեց քարոզել և ասել. «Ապաշխարհիր, քանի որ երկնքի արքայությունը ձեռքում է»»:

Հիսուսը մարգարեացնում էր այն փաստը, որ մարդիկ զուր կերկրպագեն նրան և հավատք կընծայեն ուսմունքներին, որոնք մարդակերտ, այլ ոչ թե Աստվածակերտ են: (Մատթեոս 15:9)

